Դաս 29. «Սասունցի Դավիթ» էպոսը

Գարեգին Սրվանձտյանցն ու էպոսը

1840 թվականի նոյեմբերի 17-ին է ծնվել հայ բանագիտության ու ազգագրության ուսումնասիրության հիմնադիր Գարեգին Սրվանձտյանցը: Գ.Սրվանձտյանցի գրառած նյութերն ու ուսումնասիրությունները կարևորագույն նշանակություն են ունեցել մեր ժողովրդական մշակույթի ճանաչողության ու հանրայնացման, ազգային ոգու զարթոնքի համար: Նրա բազմազան ու հրաշալի գրառումներից առանձնանում է, իհարկե, «Սասնա ծռեր» ազգային դյուցազներգության առաջին տարբերակը:

1873 թ. Գարեգին վարդապետը Մշո Առնիստ գյուղում Տարոնցի Կրպոյից գրառում է «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» անունով պատումը, որը հրատարակում է մեկ տարի անց՝ 1874 թ.: Մեծ բանահավաքին, նվիրյալ ու հայրենասեր մարդուն իրավամբ տրվում է մեր էպոսը հայտնագործողի պատիվը: Էպոսի առաջին տարբերակի գրառումը ժխտում է այն կարծիքը, որ հայերը էպոս կամ դյուցազնական վեպ չունեն: Վերականգնվում է հայ ժողովրդի էպիկական ավանդության անցյալի ու ներկայի կապը: